ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/41831-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-251-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի սեպտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1235 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-251-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-251-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ:

1. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէ, քանի որ լուսավորման, մաքրման, նոսրացման և անցումային հատումները խնամքի հատման հիմնական տեսակներ են:

2. Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող փոփոխության անհրաժեշտությունը չկա, քանի որ օրենսգրքի 4-րդ հոդվածը հստակ սահմանում է անտառային հողերի սեփականության ձևերը:

3. Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող լրացումն ընդունելի չէ, քանի որ պաշտպանական և հատուկ նշանակության անտառներում անտառվերականգնման հատումների իրականացում չի թույլատրվում:

4. Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող փոփոխություններն ընդունելի չեն, քանի որ համաձայն օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պաշտպանական նշանակության անտառներում արգելվում է անտառվերականգնման հատումների իրականացումը, իսկ համաձայն օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հատուկ նշանակության անտառներում արգելվում են անտառօգտագործման այնպիսի ձևերը, որոնք չեն համապատասխանում այդ տարածքների պահպանության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ռեժիմին:

5. Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէ, քանի որ ըստ էության՝ խնամքի հատումը միևնույն միջանկյալ հատումն է կամ դրա տեսակը:

6. Նախագծի 6-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէ, քանի որ լուսավորության, մաքրման, նոսրացման, անցումային հատումները խնամքի հատման տեսակներ (փուլեր) են:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650 – Լ որոշման 89.1-ին կետի՝ ներկայումս ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից մշակվել և քննարկման փուլում է գտնվում «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի սահմանված ժամկետում՝ 2019 թվականի նոյեմբերի առաջին տասնօրյակում: Նախարարության մշակած նախագծում Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի մի շարք հոդվածներ փոփոխվել են, մի մասն էլ ուժը կորցրած է ճանաչվել:

Նախարարության կողմից մշակվող նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը:

Ելնելով վերը շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող՝ ՀՀ անտառային օրենսգրքի գործող հոդվածները թողնել անփոփոխ և, ըստ անհրաժեշտության, նախագծի դրույթներին անդրադառնալ առաջիկայում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնության քննարկումների շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 սեպտեմբերի 2019 թվականի N 1235 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Վարդան Մելիքյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-251-13.08.2019-ՏՏԳԲ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 3
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-251-13.08.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-211-Ն անտառային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 36-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝
«Արտադրական նշանակության պետական եւ համայնքային անտառներում բնափայտի մթերումն իրականացվում է միջանկյալ (լուսավորության, մաքրման, նոսրացման, անցումային), խնամքի եւ սանիտարական հատումների արդյունքում:»

Հոդված 2. Օրենսգրքի 36-րդ հոդվածի 2-րդ մասում՝
«հատուկ նշանակության» բառերից հետո լրացնել «պետական եւ համայնքային» բառերը

Հոդված 3. Օրենսգրքի 36- րդ հոդվածը լրացնել նոր 2.1 մասով՝
«2.1 պաշտպանական եւ հատուկ նշանակության անտառներում բնափայտի մթերման նպատակով հատումներն իրականացվում են անտառավերականգնման կամավոր ընտրողական հատումների եղանակով՝ անտառի շահերից ելնելով հատման են նշանակվում հասուն, գերհասուն, վնասված, հիվանդություններով ու վնասատուներից վարակված, բնական վերաճին խանգարող ծառերը:»

Հոդված 4. Օրենսգրքի 36-րդ հոդվածի 2-րդ մասում՝
1. «մթերումն իրականացվում է» բառերից հետո հանել «միջանկյալ» բառը եւ «(խնամքի)» բառի փակագծերը
2. «մթերումն իրականացվում է» բառերից հետո լրացնել «անտառավերականգնման կամավոր ընտրողական,» բառերը

Հոդված 5. Օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում՝ հանել «(խնամքի)» բառի փակագծերը

Հոդված 6. Օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում՝
«միջանկյալ» բառից հետո լրացնել «(լուսավորության, մաքրման, նոսրացման, անցումային),» բառերը

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

<u>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի անհրաժեշտությունը</u>

Հայաստանի Հանրապետության անտառները հիմնականում ***<u>լեռնային առաջին խմբի պաշտպանական նշանակության անտառներ են</u>***, որոնք ունեն հողապաշտպան, ջրապաշտպան, հակաէռոզիոն, ջրակարգավորիչ, հակահեղեղային, հակասելավային և հակասողանքային, առողջապահական, կլիմայակարգավորիչ, ռեկրեացիոն և ***<u>ստրատեգիական</u>***

գերակա նշանակություն՝ հանդիսանալով էներգիայի աղբյուր: Անտառներն օդը հարստացնում են թթվածնով, բարձրացնում են օդի հարաբերական խոնավությունը, կարգավորում մթնոլորտային տեղումների քանակը, մեղմացնում կլիման, բարերար ազդեցություն թողնում շրջակա դաշտերի բերքատվության և մարդու առողջության վրա:

Հայաստանը համարվում է սակավանտառ երկիր: Նրա տարածքի միայն 11% -ն է անտառապատ, այն էլ հանրապետության տարածքի վրա խիստ անհավասար է բաշխված: Հյուսիս արևելյան Հայաստանի տարածքի անտառապատվածությունը մոտ 30%-է, հարավայինը՝ 16%-ից չի անցնում, իսկ կենտրոնականը՝ հազիվ 2% -է: Վերջին 25 տարվա ոչ արդյունավետ տնտեսական գոր-ծունեության և գերշահագործման հետևանքով ընկել է ՀՀ անտառների արտադրողականությունը, պաշտպանական ունակությունը և էապես նվազել է անտառների լրիվության գործակիցները:

Օրենսդրական տարընթերցումների պատճառով աղավաղվել է անտառավերականգնման միջանկյալ (խնամքի) հատումներ սահմանումը, որն իրականացվում է 4 փուլով՝ լուսավորության, մաքրման, նոսրացման և անցումային հատումներով՝ որոնք հիմնականում կատարվում են արտադրական նշանակության անտառներում և անտառտնկարկներում, իսկ այսպիսի հատումները պաշտպանական նշանակության անտառներում արգելվում են՝ օրենսգրքի հոդված 11–ի 2-րդ մասի համաձայն՝ ***պաշտպանական նշանակության անտառներում արգելվում է անտառավերականգնման հատումների իրականացումը:*** Նշենք, որ արտադրական նշանակության անտառներն են՝ բնափայտի շարունակական արտադրությունն ապահովող անտառները, որոնք չեն դասվում հատուկ և պաշտպանական նշանակության անտառների շարքին:

Նախկին Սովետական միության տարիներին Հայաստանում արտադրական նշանակության՝ բնափայտի շարունակական արտադրությունն ապահովվող անտառներ չենք ունեցել, որը հիմնավորվում է ***ՍՍՀՄ 1977թ.-ի հունիսի 17-ի օրենքով*** (http://pravo.levonevsky.org/baza/soviet/sssr4153.htm): Օրենքում անտառները հստակ դասակարգվում են 1-ին, 2-րդ և 3-րդ խմբերի, որտեղ 1-ին խմբում ընդգրկված են նաև պաշտպանական՝ լեռնային բարձր թեքությունների վրայի անտառները:

Տարընթերցման պատճառ է հանդիսանում միջանկյալ հատումների եղանակներից խնամքի՝ իր 4 փուլերով հատումներ սահմանումը: Այն կիրառելի է արտադրական նշանակության անտառներում և մատղաշ ու միջահասակ տնկարկներում, միաժամանակ պարտադիր նշելով, որ այն կիրառելի չէ պաշտպանական կատեգորիայի անտառներում: Ստորև մանրամասն ներկայացնենք այդ ոչ հստակ ձևակերպման բովանդակությունը:

Օրենսգրքի հոդված 36-ի 2-րդ մասում << միջանկյալ>> բառը վերաբերում է արտադրական նշանականության անտառավերականգնման հատումներին, որն էլ տարընթերցումների տեղիք է տալիս, քանի որ << միջանկյալ>> հատումները լինում են՝ խնամքի, սանիտարական և հատուկ նշանակության: Խնամքի հատումներ կարող են իրականացվել պաշտպանական և հատուկ նշանակության անտառներում միայն այսօրվա գործող Օրենսգրքի 3-րդ հոդվածում սահմանված խնամքի հատումներին համապատասխան, այն է՝ *ծառուտում գլխավոր անտառատեսակ կազմող ծառատեսակի աճին խոչընդոտող դանդաղաճ ծառերի պարբերաբար հեռացում:* Սակայն իրավակիրառ պրակտիկայում՝ խնամքի հատումները լինելով նաև անտառվերականգնման միջանկյալ հատումների եղանակներից մեկը (իր 4 փուլերով), որը կիրառելի է բացառապես արտադրական նշանակության անտառներում, օրենսդրական բացի և տարընթերցումների պատճառով առ այսօր կիրառվել է Հայաստանի լեռնային առաջին խմբի պաշտպանական նշանակության անտառներում՝ հիմնականում առաջնորդվելով այն դրույթով, որ մինչև 30 աստիճան թեքության լանջերի դեպքում այդպիսի խնամքի հատումները կիրառելի են, քանի որ այս պարագայում չեն համարվում պաշտպանական նշանակության անտառներ, այլապես կգործեր Օրենսգրքի հոդված 11–ի 2-րդ մասի դրույթը՝ ***պաշտպանական նշանակության անտառներում արգելվում է անտառավերականգնման հատումների իրականացումը:***

Ներկայացնենք, թե իրենից ինչ է ներկայացնում արտադրական կատեգորիայի անտառներում անտառվերականգնման միջանկյալ հատումների՝ 4 փուլերով իրականացվող խնամքի հատումների եղանակը.

-- Խնամքի հատումները ***անտառտնկարկի*** կամ ***անտառի*** (**արտադրական նշանակության**) տարիքից կախված, լինում են՝ լուսատվության, մաքրման, նոսրացման և անցումնային (միջանցիկ):

Լուսատվության հատումներ՝ կատարվում են *առաջին հասակադասի* անտառներում **Մաքրման հատումներ**՝ կատարվում են *մատղաշ* անտառներում, երբ տնկարկի լրիվությունը 1,0-0,9 և ավելին է: Հատման այս եղանակը կատարվում է տնկարկի *մինչև 11-20 տարեկան հասակը*՝ կախված ծառատեսակից, նրա ընթացիկ աճից ու խտությունից

Նոսրացման հատումներ՝ կատարվում են *2-րդ և 3-րդ հասակադասի* անտառներում՝ նախորդ հատումից 4-6 տարի հետո, երբ տնկարկը նոսրացման կարիք է զգում

Անցումնային (միջանցիկ) հատումներ՝ կատարվում են *հասունացող* անտառներում: Նման հատման նպատակն է անտառը նախապատրաստել գլխավոր օգտագործման հատման

Խնամքի հատման տեսակներն ըստ տնկարկի տարիքի

Խնամքի հատման տեսակը	Տնկարկի տարիքը (տարի)	
	ասեղնատերև և սերմնային ծագումով կարծրատերև	կոճղաշվային ծագմամբ և փափկատերև
Լուսավորում	մինչև 10	մինչև 10
Մաքրում	11-20	11-20
Նոսրացում	21-40	21-30
Անցումային	41-ից բարձր	31-ից բարձր

Վերլուծելով աղյուսակի տվյալները, հարց է առաջանում, թե Հայաստանի որ անտառտնտեսության անտառներում ունենք 21-40 և 41-ից բարձր տարիքի անտառտնկարկներ, որ 2005թ.-ից առ այսօր հատատեղային պլաններում նախատեսվում և իրականացվում են նոսրացման և անցումային հատումներ: Այս սխալը ուղղելու նպատակով է առաջարկվել Օրենսգրքի հոդված 36-ի 2-րդ մասը լրացնել նոր 2^1 մասով:

Հասուն և գերհասուն անտառային ծառատեսակների հատման տարիքը

Գերակշռող ծառերը	Անտառների նպատակային նշանակությունը			
	պաշտպանական		սոցիալական	
	տարիքը	հասակային դասը	տարիքը	հասակային դասը
1	2	3	4	5
Փշատերևավորներ				
Սոճի	121-140	VII	141-160	VIII
Կոշտատերևավորներ				
Կաղնի (սերմնային)	161-180	IX	181-200	X
Կաղնի (բնաշվային)	61-70	VII	71-80	VIII
Հաճար	141-160	VIII	161-180	IX
Բոխի (սերմնային)	81-100	V	101-120	VI
Բոխի (բնաշվային)	61-70	VII	71-80	VIII
Ղաժի	41-50	V	51-60	VI
Հացենի	121-140	VII	141-160	VIII
Թխկի	121-140	VII	141-160	VIII

Թեղի	121-140	VII	141-160	VIII
Խնձորենի	101-120	VI	121-140	VII
Տանձենի	101-120	VI	121-140	VII
Ընկուզենի	141-160	VIII	161-180	IX
Փափկատերևավորներ				
Կեչի	61-70	VII	71-80	VIII
Կաղամախի	41-50	V	51-60	VI
Լորենի	91-100	X	101-110	XI
Փռշնի	61-70	VII	71-80	VIII
Ուռի	41-50	V	51-60	VI

Աղյուսակից պարզ է, որ մեր անտառներում սահմանափակ են՝ սոճենու, կաղնու, հաճարենու, հացենու, թխկու և այլ ծառատեսակների 120-180 տարեկան ծառերի քանակը, քանի որ վերջին 25 տարում հասուն և գերհասուն, երիտասարդ տարիքի ծառատեսակները գերշահագործվել են՝ թե՛ օրինական և թե՛ ապօրինի հատումների հետևանքով:

Օրենսդրության բացի և տարընթերցման պատճառով առ այսօր՝ Օրենսգրքի պահանջներին ոչ համապատասխան գործունեություն իրականացնելու արդյունքում կիրառվում է միջանկյալ՝ խնամքի հատումներից՝ նոսրացման և անցումային եղանակները: Օրինակ՝ 2019թ.-ի հաշվարկա-յին հատատեղային պլանում «Հայանտառ» ՊՈԱԿ-ն որոշ անտառտնտեսություններում՝ բնական անտառների տարածքներում նախատեսված է իրականացնել նման հատումներ՝ այն պարագայում, երբ այդ տարածքներում չկան նախկինում հիմնված արտադրական նշանակության մատղաշ և միջահասակ անտառտնկարկներ կամ արտադրական կատեգորիայի անտառներ:

Ակնկալվող արդյունքը

Օրենսգրքում առաջարկվող լրացումներն իրականացնելուց հետո կբացառվի, հնարավորինս կչեզոքացվի Հայաստանի լեռնային առաջին խմբի պաշտպանական նշանակության բնական անտառների անհիմն, ոչ արդյունավետ շահագործումը:

Միաժամանակ առաջարկվում է պատկան մարմիններին հանձնարարել վերանայելու 2019թ.-ի հաշվարկային հատատեղային պլանով նախատեսված հատումների եղանակները և բնափայտի մթերման ծավալները: Ինչպես նաև անհրաժեշտ է շեշտը դնել վառելափայտի ծավալների ավելացման վրա (որի պաշարներն առկա են), քանի որ 2019թ.-ի համար հաստատված պլանով՝ մոտ 17000 խմ վառելափայտի ծավալը չի կարող բավարարել բնակչության ավելի քան 500.000 խմ տարեկան փաստացի պահանջարկը: Անհերքելի փաստ է, որ ունենք վառելափայտի օգտագործման էական ստվերային ծավալ: Անհրաժեշտ է վերահաշվարկել և սահմանել վառելափայտի վաճառքի հիմնավոր և ողջամիտ մատչելի բացթողնման գներ՝ նվազեցնելով գործող գները: Կարծիքներ կլինեն, թե պետ. բյուջեի եկամուտները կնվազեն, բայց դա այդպես չէ, քանի որ գնի խելամիտ նվազեցումը թույլ կտա ավելացնել օրինական վաճառքի ծավալները, ինչն էլ կնպաստի վառելափայտի ստվերային վաճառքի ծավալների զգալի կրճատման: